5692

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 03 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0052-23

Ձեռնարկողը՝ ***«ԱՐՄ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ***
ք. Երևան, Ֆրունզեի փողոց 60Ա

Գործունեությունը՝ ***Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների 81 և 81/8 հասցեում պահեստային շինությունների և պահեստ-ցուցասրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ / Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0052-23

< 28 > 03 2023թ.

Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների 81 և 81/8 հասցեներում պահեստային շինությունների և պահեստ-ցուցասրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՐՄ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ «ԱՐՄ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների 81 և 81/8 հասցեներում նախատեսվում է կառուցել պահեստային շինություններ և պահեստ-ցուցասրահ: Պահեստային շինությունների կառուցման նպատակն է մետաղական ամրանների, պրոֆիլների, պրոֆիլավոր թիթեղների, ինչպես նաև անվտանգ՝ ոչ հրապայթյունավտանգ, չինքնայրվող, մարդկանց առողջության համար վտանգավոր քիմիական բաղադրիչներ չպարունակող շինանյութերի պահեստավորումը և ցուցասրահում պահեստավորված նյութերի ցուցադրությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն ՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և փորձաքննության է ենթարկվում որպես կառուցապատում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. մարտի 7-ի N 01/18-07/2-14802-109 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման N 23012021-01-0195 և N 30032021-01-0230 վկայականներով ամրագրված՝ 2.518878 և 0.033241 հա մակերեսով հողամասերում, որոնց նպատակային նշանակությունը արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների փողոց N 81 և N 81/8 հասցեներում: Դիտարկվող տարածքում չկան շինություններ և կառույցներ: Նախատեսվող գործունեության մոտակայքում են Նաիրիտ գործարանը (53 մ) և նախկին անվադողերի

գործարանը, մոտակա բնակելի թաղամասը գտնվում է 1000-1200 մ հեռավորության վրա: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի Թամանցիների փողոցով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս արևմտյան հատվածում, որտեղ ռելիեֆը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք անկումով ունի մեղմ թեքություն, գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,4g և ունի 8-9 բալ սեյսմակայունություն: Ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել, գրունտային ջրերը գտնվում են 8 մ-ից խորը հատվածներում:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, բացակայում են ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները: Բնական լանդշաֆտները, բուսածածկույթը, ծառաթփային բուսականությունը կառուցապատվող տարածքում բացակայում է:

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ նախագծով նախատեսվում է 10782.7 մ² մակերեսով երեք պահեստային շինություններ՝ որից մեկում նախատեսված է ցուցասրահ:

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի ընդհանուր մակերես – 2.518878 հա և 0.033241 հա (25521.19 մ²),
- կառուցապատման մակերես - 10.782.7մ² / (42.25%),
- ճանապարհներ, ասֆալտապատ, սալիկապատ տարածքներ-11487.5 մ²/ 45,01%),
- կանաչապատման մակերես - 2941.0 մ² / (11.52%),
- ավտոկայանատեղի՝ նախատեսված մոտ 20 մեքենայի համար-310.0մ² / (1.22%):

ԹԻՎ 1 պահեստային շինությունը նախատեսված է իրականացնել ե/բ սյունահեծանային համակարգով: Շինությունն ունի մեկ նկուղային և երկու վերգետնյա հարկեր և կազմված է երկու մասից՝ պահեստից և ցուցասրահից: Պահեստի մուտքը կազմակերպվել է ներքին բակային տարածքից, ցուցասրահի գլավոր մուտքը՝ շինության դիմային ճակատից՝ Թամանցիների փողոցից: Շինությունը ապահովված է բեռնատար վերելակով և 5 աստիճանավանդակներով: Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը ապահովելու համար նախատեսվել են միջոցառումներ՝ հարմարեցված սանհանգույց, ավտոկայանատեղի, շինության առաջին հարկի հատակի և փողոցի նիշի տարբերությունը կազմում է 0□04 մ: Տանիքը նախատեսվել է հարթ, ջրահեռացումը կազմակերպված ներքին: Տանիքում տեղադրվել է ուղղաձիգ սանդուղք՝ տանիք բարձրացող աստիճանավանդակի և վերելակի համար տանիքաձածկի վրա նախատեսված տեխնիկական սենյակ բարձրանալու նպատակով:

Թիվ 2 և թիվ 3 պահեստային շինությունները նախատեսված են իրականացնել ե/բ սյունահեծանային համակարգի և մետաղական թեթև կոնստրուկցիաների և քարե պատերի համադրմամբ: Դիմային ճակատներում դարպասներ են բեռնատար ավտոմեքենաների բեռնաթափման համար: Մյուս ճակատները նախատեսվել են խուլ առանց բացվածքների:

Ավտոկայանատեղին նախատեսվում է պահեստ-ցուցասրահի դիմային հատվածում՝ մուտքը ու ելքը Թամանցիների փողոցից, տեղադրվելու են ճանապհատրանսպորտային համապատասխան նշաններ:

Տարածքի եզրագծով նախատեսված է իրականացնել պարիսպ (H=3.00 մ):

Էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունն ապահովելու նպատակով օգտագործվելու են համապատասխան մեկուսացման շերտեր և նյութեր, բարձր որակի պատուհաններ:

Պահեստային շինությունները ապահոված են լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և համապատասխան միջոցառումներով:

Շահագործման փուլում պահեստային շինությունները չեն ջեռուցվելու, իսկ ցուցասրահը տաքացվելու է էլեկտրատաքացուցիչներով: Պահեստային շինությունները սարքավորված կլինեն ծխահրդեհային ազդարարիչներով: Օդորակման համակարգերը տեղադրվելու են տանիքում:

Էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն ՀԷՑ ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ ԳԵ1947- Թամանցիների փող. 81 ենթակայանի 0.4 ԿՎ վահանից:

Համաձայն «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցային համակարգին: Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի դիմացով անցնող 250 մմ գոյություն ունեցող ջրագծից, իսկ ջրահեռացում՝ միանալով տարածքի դիմացով անցնող՝ 590 մ հեռավորությամբ գտնվող կոյուղագծին: Կոյուղագծի միացման կետում՝ ջրաչափական հանգույցի համար նախատեսվում է կառուցել դիտահոր: Ներքին սառը ջրամատակարարման ցանցն իրականացվելու է 20-25 մմ տրամագծով պոլիպրոպիլենային խողովակներով: Կոյուղու ներքին ցանցն իրականացվելու է 50-100 մմ տրամագծով կոյուղու պոլիէթիլենե խողովակներից: Կոյուղու թողարկները պոլիէթիլենե խողովակներով միանալու են կոյուղու բակային ցանցին:

Մակերևութային ջրերի մի մասի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին:

Պահեստային շինությունների և պահեստ-ցուցասրահի կառուցման շինարարական աշխատանքների տևողությունն է 27 ամիս, նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է: Շինհրապարակը առանձնանալու է ճանապարհը փակող նշաններով, կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ: Շին՝ հրապարակում պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Նախատեսվող շինարարական և տրանսպորտային միջոցներից օգտագործվելու են ամբարձիչ տելեսկոպիկ, բեռնատար ինքնաթափ մեքենա, բետոնախառնիչ, էլեկտրական և ձեռքի գործիքներ և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր, երեսապատման սալիկներ և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա:

Անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի խառնուրդի/շաղախի պատրաստումը:

Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից: Էլեկտրամատակարարումը իրականացվելու է գոյություն ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից՝ ժամանակավոր էլեկտրամալուխների անցկացման միջոցով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող ժամանակավոր բիոզուգարանից, ինչի սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով, այն ապամոնտաժվելու է շին՝ աշխատանքների ավարտից հետո:

Նախատեսվող գործունեության իրագործման համար նախատեսվում է 12500^3 ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է պահեստային շինությունների

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

և պահեստ-ցուցասրահի հիմքերի փորման, ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտների մի մասը՝ մոտ 20 %-ը (գրունտի 2500 խմ ծավալը) կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով՝ հետագայում որպես հետլիցք օգտագործելու նպատակով: Պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով:

Համաձայն Հայտի՝ գործունեության տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Հիմնական առաջացող թափոնատեսակը կենցաղային աղբն է՝ տարեկան մեկ մարդու հաշվարկով 120 կգ /3840 կգ/տարի, ընդհանուրը 852.0 կգ և շինարարական աղբը՝ 420 մ³ ծավալով: Կառուցապատման ընթացքում կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, իսկ շինաղբը կտեղադրվի համապատասխան աղբավայրում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շին⍰ աշխատանքների, կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (32 մարդ) կազմում է 633.42 խմ/շին.ժամ: Տեխնիկական նպատակներով ջուրը (1757.4 մ³) նախատեսված է տարածքի ջրցանման համար:

Անիվների լվացումից և շինհրապարակում առաջացած հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Հոսքաջրերը հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրված պարզարան, իսկ անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը կուղղորդվեն բակային ջրացանց, այնուհետև պարզարան: Պարզարանում մեխանիկական նստեցման արդյունքում պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի մոտ 11.52%-ը՝ 2941.0 քմ: Տարածքում նախատեսվում է տնկել հետևյալ թվաքանակներով ծառեր՝ կծոխուր թունբեգի (7), գիհի կազակական (34), թխկի կարմիր (1), թույա գնդաձև ոսկեգույն (2), սոճի ղրիմյան (24), ձիակասկ (33), խոտի սերմ (144 կգ): Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելն կանաչապատվող տարածքում իրականացնվելու են սանիտարական մաքրման աշխատանքներ, հողի փխրեցում, առկա բեկորային քարերի հեռացում, 20 սմ շերտով հողախառնուրդի ավելացում: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի և ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան: Կանաչապատման համար պահանջվող բուսահողի (հողախառնուրդ 578 խմ) ձեռքբերումը, տեղափոխումը, պահեստավորումը, հետագա օգտագործումն իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի հետ:

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ ըստ ոռոգման նախագծի նախատեսվում է անցկացնել ցնցուղային ոռոգման համակարգ 1800 և 3600 ցողիչներով:

Ներկայացվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում՝

- Օդային ավազան փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումների պարբերական չափագրումներ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում ըստ անհրաժեշտության՝ հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր՝ տեխնիկական որակի և պարզարանում կուտակված ջրով,
- հանված հողային գրունտների պահեստավորում թույլատրված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, անհրաժեշտության դեպքում հետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխում՝ փակ ծածկ ունեցող մեքենաներով, շինարարական նյութերի տեղադրում հատուկ տակդիրների կամ անջրթափանց հիմքով բետոնապատ մակերեսների վրա,
- հեղուկ և վտանգավոր նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների շահագործումը, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, անհրաժեշտության դեպքում համապատասխան խլացուցիչներով ապահովում,
- տրանսպորտային միջոցների լիցքավորում և տեխնիկական սպասարկում տարածքից դուրս՝ վառելիքի լիցքավորման և տեխնիկական սպասարկման կայաններում,
- շինհրապարակի և բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների մաքրում հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից,
- տեղեկատվական ցուցանակների, ձայնային ազդանշանների տեղադրում, հակահրդեհային անվտանգության պաստառների, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմանների (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն) ստեղծում՝ ապահովված անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն)՝ համաձայն Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, խնամքի ապահովում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի՝ նախատեսվող գործունեությունն իրականացվելու և շահագործվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության ընթացքում լինելու են կառավարելի: Հայտով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կբացառվեն կամ կմեղմացվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Շենգավիթ վարչական շրջանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել Հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, համապատասխան ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Պահեստային շինությունները և պահեստ-ցուցասրահը շահագործելիս անհրաժեշտ է պահպանել Հայտով ամրագրված պահեստավորման ենթակա ապրանքների տեսակն ու բնույթը՝ բացառելով վտանգավոր նյութերի/ապրանքների պահեստավորումը:
- Ապահովել ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի XVI բաժնի 311-րդ կետով սահմանված նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների 81 և 81/8 հասցեներում պահեստային շինությունների և պահեստ-ցուցասրահի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության Հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան